

## ԼԵՎՈՆ ԿՈՐՅՈՒՆԻ ԵԶԵԿՅԱՆ

Լրացավ ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Կորյունի Եզեկյանի ծննդյան 70-ամյակը:

Լ. Եզեկյանը ծնվել է 1941 թվականի հունիսի 13-ին Լվով քաղաքում: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո՝ 1959 թվականին, ընդունվել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է գերազանց առաջադիմությամբ: Բարձրագույն կրթություն ստանալուց հետո ուսումը շարունակել է



ասպիրանտուրայում՝ ակադեմիկոս Գուրգեն Սևակի ղեկավարությամբ: 1971 թվականին պաշտպանել է թեկնածուական, 1990 թվականին՝ դոկտորական ատենախոսություն, իսկ 1991 թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Իր բազմամյա արգասավոր գործունեության ընթացքում պրոֆ. Լ. Եզեկյանը հաջողությամբ համատեղել է դասախոսական, վարչական ու գիտական գործունեությունը, կատարել մի շարք հասարակական աշխատանքներ, եղել բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ, իսկ 1991 թվականից մինչև այսօր ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչն է:

Դասախոսական աշխատանքը Լ. Եզեկյանն սկսել է 1965 թվականից և հաջողությամբ շարունակում է իր գիտելիքները ավանդել նոր սերնդին: Իր բազմամյա գիտամանկավարժական գործունեության ընթացքում նա վարել է մասնագիտական տարբեր դասընթացներ՝ «Ժամանակակից հայոց լեզու», «Ոճագիտություն», «Խոսքի մշակույթի հիմունքներ» և այլն, իր փորձն ու գիտելիքները հաղորդել ուսանողներին, ասպիրանտներին ու հայցորդներին:

Մանկավարժական աշխատանքին զուգընթաց Լ. Եզեկյանը կատարել է գիտական կարևոր աշխատանք, որի արդյունքն են մի շարք արժեքավոր մենագրությունները, ուսումնամեթոդական ձեռնարկները, բազմաթիվ հոդվածները: Նրա՝ «Ռաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը», «Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր», «Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն» գրքերը լեզվի զարգաց-

ման ընթացքի, հեղինակային լեզվի առանձնահատկությունների քննության հաջողված ուսումնասիրություններ են:

Լ. Եզեկյանը կարևոր ներդրում ունի նաև ուսումնամեթոդական գրքերի ստեղծման գործում: Այդ են վկայում «Հայոց լեզու» բուհական դասագիրքը, ավագ դպրոցի հայոց լեզվի դասագրքերը (10, 11, 12-րդ դասարաններ՝ համահեղինակությամբ):

Լ. Եզեկյանի հեղինակած գիտական ուսումնասիրությունների, դասագրքերի և ուսումնամեթոդական ձեռնարկների մեջ առանձնանում են հատկապես տեսական ոճագիտությանը նվիրված աշխատանքները: Նրա «Հայերենի գործառական ոճերը», «Ոճագիտության ուղեցույց» և մասնավորապես «Ոճագիտություն» ուսումնական ձեռնարկը էական դեր ունեն ոճագիտության ուսուցման գործում: Վերջինս նախատեսված է բուհերի ուսանողների համար: Նրանում համակարգված ներկայացված են ոճերի դասակարգման սկզբունքները, լեզվական և ոճական նորմերի ըմբռնումները, ոճագիտական հնչյունական, բառային և քերականական միավորները, լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցները:

Պրոֆ. Լ. Եզեկյանը կարևոր ներդրում ունի գիտամանկավարժական տարբեր բնագավառներում. նա «Լեզվաբանություն» մասնագիտությամբ աստիճանաշնորհող մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալն է, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, ՀՀ լեզվի տեսչության, ԵՊՀ գիտական խորհուրդների, ինչպես նաև հայ բանասիրության, ժամանագերմանական բանասիրության ֆակուլտետների խորհուրդների անդամ:

Սրտանց շնորհավորում ենք Լ. Եզեկյանին ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, մաղթում քաջամոռոջություն, երկար տարիների կյանք, բեղմնավոր գիտամանկավարժական գործունեություն և գիտական նորանոր նվաճումներ:

**ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ**